

Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
հունիսի 4-ի N 1034-Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՂԵՐԻ, ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ
(ՏՈՒՐՔԵՐԻ), ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՂԵՐԻ
ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ 50 %-Ի
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն հավելվածով հաստատված ծրագրով կարգավորվում են դեղերի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրվող դեղերի՝ Եվրասիական տնտեսական միության գրանցումների և վերագրանցումների, ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի գրանցումների և վերագրանցումների, միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի), արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների ծախսերի 50 %-ի փոխհատուցման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն ծրագրի իմաստով՝

1) դեղ արտադրող է համարվում դեղերի արտադրության լիցենզիա ստացած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը.

2) հայտատու է համարվում փոխհատուցում ստանալու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) հայտ ներկայացրած դեղ արտադրողը.

3) շահառու է համարվում հայտատուն, որը նախարարության հետ կնքել է պայմանագիր փոխհատուցման տրամադրման մասին:

3. Փոխհատուցումը տրամադրվում է շահառուին ՀՀ պետական բյուջեի միջոցների և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

4. Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում Եվրասիական տնտեսական միության գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ տրամադրվում է յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 1.05 մլն դրամը:

5. Միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ իրականացվում է յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 550 հազար դրամը:

6. Ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննության վճարների (տուրքերի) 50 %-ի չափով փոխհատուցումը ներառված է սույն ծրագրի 4-րդ և 5-րդ կետերում նշված ֆինանսավորման գումարի մեջ, քանի որ սույն ծրագրի 4-րդ և 5-րդ կետերում կարող են առկա լինել դեղեր, որոնք կհանդիսանան ռազմավարական նշանակության:

7. Արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների ծախսերի փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ իրականացվում է յուրաքանչյուր դեղի համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 2.5 մլն դրամը:

8. Յուրաքանչյուր տարվա համար ֆինանսավորումն իրականացվում է մինչև տվյալ տարվա համար սահմանված բյուջեի սպառումը՝ ըստ ներկայացված հայտերի հերթականության: Լրամշակման ուղարկված հայտի՝ փոխհատուցման տրամադրման նպատակով ժամկետների հաշվարկման համար հիմք է ընդունվում հայտատուի կողմից սկզբնական հայտի ներկայացման ամսաթիվը:

9. Տվյալ տարվա համար տրամադրվող ընդհանուր փոխհատուցման չափը չի կարող ավելի լինել, քան սույն ծրագրի համար տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ տարվա համար սահմանված չափն է:

10. Եթե հայտով նախատեսված՝ պետությունից ակնկալվող փոխհատուցման գումարի չափը գերազանցում է հայտի ներկայացման օրվա դրությամբ ծրագրի իրականացման նպատակով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով տվյալ տարվա համար սահմանված ֆինանսական միջոցների մնացորդը, և շահառուն համաձայնել է փոխհատուցում ստանալ այդ մնացորդի չափով, ապա փոխհատուցման տրամադրման չափը կազմում է այդ մնացորդի չափով, բայց ոչ ավելի, քան սույն հավելվածի 4-7-րդ կետերում նշված չափերը:

11. Սույն հավելվածի 1-ին կետում նշված վճարների (տուրքերի) կամ ծախսերի գումարի չափն արտարժույթով արտահայտված լինելու դեպքում այն հաշվարկվում է հայտատուի կողմից վճարի (տուրքի) փաստացի վճարման կամ ծախսի փաստացի կատարման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա համար սահմանված փոխարժեքով:

12. Հայտատուն դեղի գրանցման և վերագրանցման գործընթացի ավարտից հետո փոխհատուցում ստանալու նպատակով հայտ է ներկայացնում նախարարություն՝ համաձայն N 1 ձևի: Հայտը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային փոստով (էլ. հասցե՝ secretariat@mineconomy.am), որի դեպքում հայտատուն հայտը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ ուղարկում է ստորագրված բնօրինակ փաստաթղթի սկանավորված տարբերակը:

13. Հայտին կից հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) լիազոր մարմնի կողմից տվյալ արտադրանքի համար տրված գրանցման հավաստագրի պատճենը, իսկ արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների դեպքում՝ արտերկրում դեղի գրանցումը հիմնավորող փաստաթղթի պատճենը.

2) լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում), իսկ արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների դեպքում՝ արտերկրում դեղի գրանցումն իրականացնող մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում).

3) կատարված ծախսերը հավաստող համապատասխան փաստաթղթերի պատճենները (հաշվարկային փաստաթղթի, վճարման անդորրագրի և այլ փաստաթղթերի պատճենները).

4) ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայականի պատճենը.

5) բանկային հաշվեհամար (հավաստող փաստաթուղթ, տեղեկանք).

6) տեղեկատվություն՝ համաձայն N 2 ձևի.

7) հայտարարություն՝ համաձայն N 3 ձևի.

8) այլ տեղեկություն՝ դիմողի ցանկությամբ:

14. Հայտատուն ՀՀ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության իսկության համար:

15. Նախարարությունը հայտն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է փաստաթղթերը և դրանց ամբողջական լինելու դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուի հետ կնքում է փոխհատուցում տրամադրելու մասին պայմանագիր՝ համաձայն սահմանված օրինակելի ձևի:

16. Հայտի և կից փաստաթղթերի թերի լինելու կամ դրանցում անհամապատասխանություններ առկա լինելու դեպքում նախարարությունը հայտն ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ առաջարկելով 5 աշխատանքային օրվա ընթացքում լրացնել փաստաթղթերը կամ շտկել դրանցում առկա անհամապատասխանությունները և փաստաթղթերի լրամշակված փաթեթը ներկայացնել նախարարություն:

17. Նախարարությունը փաստաթղթերի լրամշակված փաթեթն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է այն և ամբողջական լինելու դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուի հետ կնքում պայմանագիր՝ սույն հավելվածի 15-րդ կետում նշված դրույթներին համապատասխան:

18. Հայտատուի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման՝

1) եթե հայտով նախատեսված՝ պետությունից ակնկալվող փոխհատուցման գումարի չափը գերազանցում է հայտի ներկայացման օրվա դրությամբ ծրագրի իրականացման նպատակով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով

տվյալ տարվա համար սահմանված ֆինանսական միջոցների մնացորդը, և հայտատուն չի համաձայնել օժանդակություն ստանալ այդ մնացորդի չափով.

2) հայտով ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում ծրագրի պահանջներին.

3) ծրագրի 16-րդ կետով սահմանված ժամկետում թերությունները շտկված հայտը չի ներկայացվել նախարարություն կամ կրկին ներկայացվել է թերի:

19. Եթե հայտը մերժվել է ծրագրի 18-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով, ապա կարող է կրկին հայտ ներկայացվել հաջորդ ժամանակահատվածում, եթե ծրագրի համար տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված են ֆինանսական միջոցներ:

20. Նախարարությունը պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցման գումարը փոխանցում է շահառուի հաշվեհամարին՝ տվյալ ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայության պարագայում:

Ձև N 1

Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում
Եվրասիական տնտեսական միության,
ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի,
միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի
գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի),
արտերկրում հայկական արտադրության դեղերի
գրանցումների փորձաքննությունների ծախսերի 50 %-ի փոխհատուցման

(կազմակերպության անվանումը)

ՀՎՀՀ _____

Գտնվելու վայրը _____

Պետական ռեգիստրում գրանցման համար _____

Հեռախոսահամար _____

Էլ. Փոստ _____

Պատասխանատու կոնտակտային անձ

Ա.Ա.Հ. _____

Պաշտոնը _____

Հեռախոսահամարը _____

Փոստային հասցեն _____

Էլ. փոստի հասցեն _____

Հ Ա Յ Տ

ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՂԵՐԻ,
ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ
ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՏՈՒՐՔԵՐԻ),
ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ 50 %-Ի ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

Խնդրում եմ, համաձայն Հայաստանի Հանրապետությունում Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում Եվրասիական տնտեսական միության, ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի, միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի), արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների ծախսերի 50 %-ի փոխհատուցման ծրագրի՝ տրամադրել ծախսերի փոխհատուցում:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) լիազոր մարմնի կողմից տվյալ արտադրանքի համար տրված գրանցման հավաստագրի պատճենը, իսկ արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների դեպքում՝ արտերկրում դեղի գրանցումը հիմնավորող փաստաթղթի պատճենը.

2) լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում), իսկ արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների դեպքում՝ արտերկրում դեղի գրանցումն իրականացնող մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում).

3) կատարված ծախսերը հավաստող համապատասխան փաստաթղթերի պատճենները (հաշվարկային փաստաթղթի, վճարման անդորրագրի և այլ փաստաթղթերի պատճենները).

4) ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայականի պատճենը.

5) բանկային հաշվեհամար (հավաստող փաստաթուղթ, տեղեկանք),

6) տեղեկատվություն՝ համաձայն N 2 ձևի.

7) հայտարարություն՝ համաձայն N 3 ձևի.

8) այլ տեղեկություն՝ դիմողի ցանկությամբ:

Առդիր՝ _____ էջ:

Տնօրեն _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Կ. Տ.

Ձև N 2

Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում
 Եվրասիական տնտեսական միության,
 ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի,
 միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի
 գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի),
 արտերկրում հայկական արտադրության դեղերի
 գրանցումների փորձաքննությունների ծախսերի 50 %-ի փոխհատուցման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Դեղի անվանումը	Դեղի նկարագիրը	ԵԱՏՄ գրանցման կամ վերագրանցման փորձաքննության վճարի (տուրքի) չափը	Միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղի գրանցման կամ վերագրանցման փորձաքննության վճարի (տուրքի) չափը	Արտերկրում հայկական արտադրության դեղի գրանցման փորձաքննության ծախսի չափը	Դեղի ռազմավարական նշանակության պարագայում համապատասխան նշանառումը (☑)

(Աղյուսակի սյունակները լրացվում են ըստ համապատասխանության՝ կախված գրանցման կամ վերագրանցման տեսակից):

 Կազմակերպության (անունը) (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

 (ստորագրությունը)

Կ. Տ.

_____ 20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում
Եվրասիական տնտեսական միության,
ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի,
միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի
գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի),
արտերկրում հայկական արտադրության դեղերի
գրանցումների փորձաքննությունների 50 %-ի փոխհատուցման

Հ Ա Յ Տ Ա Բ Ա Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

_____ -ն հայտնում և հավաստում եմ, որ,
(Կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը)

- 1) դատական կարգով սնանկ ճանաչված չեմ.
- 2) օժանդակություն ստանալու նպատակով հայտի ներկայացման պահի դրությամբ հայտատուի նկատմամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթ առկա չէ.
- 3) «_____»-ի գործադիր մարմնի ներկայացուցիչս հայտը ներկայացնելու
Կազմակերպության անվանումը (անունը)

պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չեմ եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է:

Հավաստիացնում եմ, որ սույն հայտում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Ես՝ _____ ս, պարտավորվում եմ իմ կողմից ներկայացված նշված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

(Կազմակերպության (անունը) (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

_____ 20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ